## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## «ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ Կ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 67-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱ-ԲԵՐՅԱԼ» ԵՎ «ՔԱՂԱՔԱՑԻ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱ-ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԵՐՈՎ ԴԻՄՈՂ-ՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԵՎ Ա. ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԻՋՆՈՐ-ԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Բավարարել «Քաղաքացիներ Ա. Սարգսյանի եւ Կ. Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» եւ «Քաղաքացի Ա. Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխա-նության հարցը որոշելու վերաբերյալ» գործերով դիմողների ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի եւ Ա. Ղազարյանի՝ 20.01.2010թ. միջնորդությունը՝ նշված գործերի դատաքննությունների օրերը փոխապեղելու վերաբերյալ, եւ գործերի դատաքննու-թյունների օրերը փոխապեղել՝ համապատասխանաբար 16.03.2010թ.՝ 30.03.2010թ., ժամը 11.00, իսկ 30.03.2010թ.՝ 16.03.2010թ., ժամը 11.00:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել սահմանադրական դատարանի 25.12.2009թ. ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշման 1-ին կետը եւ ՍԴԱՈ-127 աշխա-տակարգային որոշման 2-րդ կետը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 հունվարի 2010 թվականի
ՍԴԱՈ -7